ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27-ը հոկտեմբերի 2020 թ. N 219
Նոր Հաճն

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ,48-րդ և 53-րդ կետերի պահանջներով ՝ ***որոշում եմ.***

Արմենակ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 000951/ բնակարանը վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Տոռոզյան փողոց, 10 շենք, բնակարան թիվ 5:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 220

### ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի , Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչներ հանդիսացող ժամկետային զինծառայողները 2020 թվականի սեպտեմբերի 27- ից սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել են վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող թվով յոթ ժամկետային զինծառայողների ընտանիքներին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 700000 (յոթ հարյուր հազար) դրամ դրամական օգնություն ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ. հոկտեմբեր 29
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 29-ի N 220 որոշման

ՑԱՆԿ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Գումարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Էդգար Մարգարյան | 100000 |
| 2. | Կամո Գևորգյան | 100000 |
| 3. | Գառնիկ Ենոքյան | 100000 |
| 4. | Տարոն Հովհաննիսյան | 100000 |
| 5. | Գագիկ Ղազարյան | 100000 |
| 6. | Դավիթ Օհանյան | 100000 |
| 7. | Նաիրի Բուռնուսուզյան | 100000 |

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 221

### ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի , Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչներ հանդիսացող կամավորականները 2020 թվականի սեպտեմբերի 27- ից սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել են վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչներ հանդիսացող թվով երկու կամավորականների ընտանիքներին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 200000 (երկու հարյուր հազար) դրամական օգնություն ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020թ. հոկտեմբերի 29
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 29-ի N 221 որոշման

# ՑԱՆԿ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | Անդրանիկ Բարսեղյան | 100000 |
| 2. | Արայիկ Դալլաքյան | 100000 |

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Հոկտեմբեր 2020 թվականի N 222

## ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ԺԱՄԿՈՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի , Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող պայմանագրային զինծառայող Հայկ Աշոտի Ժամկոչյանը 2020 թվականի սեպտեմբերի 27- ին սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող պայմանագրային զինծառայող Հայկ Աշոտի Ժամկոչյանի ընտանիքին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 (հարյուր հազար) դրամական օգնություն :

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020թ. հոկտեմբեր 29
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 223

## ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ, ՍՊԱ՝ ԱՐԱՄ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի , Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող զինծառայող, սպա՝ Արամ Ռաֆիկի Սարգսյանը, 2020 թվականի սեպտեմբերի 27- ից սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող զինծառայող, սպա Արամ Ռաֆիկի Սարգսյանի ընտանիքին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 (հարյուր հազար) դրամական օգնություն :

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար** ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

2020 թ. հոկտեմբեր 29
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 Հոկտեմբերի 2020թվականի N 224

### ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <ԱՐԾԻՎ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐ> ՋՈԿԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի , Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչներ հանդիսացող <Արծիվ մահապարտներ> ջոկատի անդամները 2020 թվականի սեպտեմբերի 27- ից սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել են վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքի բնակիչներ հանդիսացող <Արծիվ մահապարտներ> ջոկատի թվով երկու անդաների ընտանիքներին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 200000 (երկու հարյուր հազար) դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ. հոկտեմբեր 29
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 29-ի N 224 որոշման

ՑԱՆԿ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ԱՐԾԻՎ ՄԱՀԱՊԱՐՏՆԵՐ>> ՋՈԿԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | Նորիկ Սահակյան | 100000 |
| 2. | Տարոն Ղազարյան | 100000 |

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2020 թվականի N 225

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի երկու բնակիչների դիմումները և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածից ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 140000 (հարյուր քառասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի ներքոհիշյալ բնակիչներին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ.Մաթևոսյան**

02.11.2020թ.

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի նոյեմբերի 2-ի N 225 որոշման

ՑԱՆԿ
ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | Արտյոմ Նավոյան | 70000 |
| 2. | Մակիչ Պողոսյան | 70000 |

Համայնքի ղեկավար՝ Գ. Մաթևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04-ը նոյեմբերի 2020 թ. N 226
Նոր Հաճն

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով ***որոշում եմ.***

1. Միեր Հասանխանի Սարուխանյանին տալ բնակելի տան և օժանդակ շինության շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Նոր Հաճն համայնքի Հարվ արևելյան թաղամասի 2-րդ փողոցի թիվ 17 հասցեի հողամասում:
(շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 227

### ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ, ՍՊԱ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՄԻԿՈՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-հոդվածի1- ին մասին 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի, 40- րդ հոդվածի2-րդ մասի 1- ին կետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքի բնակիչ հանդիսացող զինծառայող, սպա՝ Կարապետ Մամիկոնի Հովհաննիսյանը զոհվել է 2020 թվականի սեպտեմբերի 27- ից սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում՝**որոշում եմ.**

1.Համայնքի բյուջեի գործառական դասակարգման 10.7.1 հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածի տնտեսագիտական դասակարգման 4726<Հուղարկավորության նպաստներ բյուջեից> հոդվածից 350000 դրամ և 01.06.1 <Հանրային ծառայություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4269 <Նպատակային այլ նյութեր> հոդվածից 50000 դրամ հատկացնել Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված զինծառայող, սպա Կարապետ Մամիկոնի Հովհաննիսյանի հուղարկավորության ծախսերը հոգալու համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ,գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին՝ ապահովել ֆինանսավորումը և կատարել վճարումը:

3. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Է. Խամբաբյանի վրա:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ.նոյեմբեր 9
ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020թվականի N 228

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի /Հավելվածը կցվում է/:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ,գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ. նոյեմբեր 10
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի
ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 10-ի
N 228 որոշման

# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

(հազար դրամ)

| Հ/Հ | Եկամուտներ, ծախսեր | | | | Հաստատված գումարը | ավելացում /+/ պակասեցում /-/ | Փոփոխված գումարը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Գործառնական դասակարգում | | Տնտեսագիտական դասակարգում | | | | |
| | Անվանումը | Ծածկագիրը | Անվանումը | Հոդվածը | | | |
| | ԾԱԽՍԵՐ | | | | | | |
| 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 01.06.01 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 8500,0 | -125,0 | 8375,0 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 01.06.01 | Առողջապահական և լաբարատոր նյութեր | 4266 | 500,0 | 125,0 | 625,0 |

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2020 թվականի N 229

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆՑԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճնցի զինծառայողները 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել են վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճնցի թվով ութ զինծառայողների ընտանիքներին համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 800000 (ութ հարյուր հազար) դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 03301132

12 նոյեմբերի 2020թ.
Նոր Հաճն համայնք

Հավելված

Նոր Հաճն համայնքի ղեկավարի

2020 թվականի նոյեմբերի 12-ի N229 որոշման

# ՑԱՆԿ

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆՑԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

| հ/հ | անուն , ազգանուն | տրամադրվող գումարի չափը՝ դրամ |
|---|---|---|
| 1. | ժամկետային զինծառայող<br>Նարեկ Համլետի Հակոբյան | 100000 |
| 2. | ժամկետային զինծառայող<br>Արման Արմենի Քեշիշյան | 100000 |
| 3. | ժամկետային զինծառայող<br>Արսեն Անդրանիկի Արամյան | 100000 |
| 4. | ժամկետային զինծառայող<br>Կարեն Ալբերտի Հակոբյան | 100000 |
| 5. | ժամկետային զինծառայող<br>Սմբատ Անդրանիկի Մկրտչյան | 100000 |
| 6. | ժամկետային զինծառայող<br>Սաշա Արթուրի Արզումանյան | 100000 |
| 7. | խաղաղապահ<br>Արման Արմենի Միրզոյան | 100000 |
| 8. | կամավորական<br>Գոռ Հրաչի Հարությունյան | 100000 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16-ը նոյեմբերի 2020 թ. N 230
Նոր Հաճն

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԳԻՍ ՋՈՒԼՖՅԱՆ ԹԱՂԱՄՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Պետրոս Գրիգորի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Պետրոս Գրիգորի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2010 թվականի մայիսի 05-ի N 2700448 վկայական) Սարգիս Ջուլֆյան թաղամասի 4-րդ փողոցի 20 հասցեում գտնվող, 07-006-0005-0063 կադաստրային ծածկագրով՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 14.21 քառակուսի մետր արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, 12.42 քառակուսի մետր, 29.7 քառակուսի մետր, 7.97 քառակուսի մետր և 3.97 քառակուսի մետր մակերեսներով ծածկոցները, 2.64 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 43.53 քառակուսի մետր արտաքին մակերեսով թռչնագոմը և 4.82 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
2. Պետրոս Գրիգորի Պետրոսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 119.26 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար, սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 250446 (երկու հարյուր հիսուն հազար չորս հարյուր քառասունվեց) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Մաթևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N231

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի բնակչի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել Կարինե Հայրապետյանին, մոր՝ Համեստ Օհանջանյանի, թաղման ծախսերը հոգալու համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար** **Գ. Մաթևոսյան**

ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆ ... ՂԵԿԱՎԱՐ * 03301132 *

18.11.2020թ.
Ք.Նոր Հաճն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@maiI.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 232

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ. փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի թվով հինգ բնակիչների դիմումները, և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1 <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից 150000 (հարյուր հիսուն հազար) դրամի չափով դրամական օգնություն ցույց տալ սոցիալապես անապահով անձանց՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3.Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Էդգար Խամբաբյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ. Մաթևոսյան**

18.11.2020թ.
ք. Նոր Հաճն

ՀԱՎԵԼՎԱԾ
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2020 թվականի նոյեմբերի 18-ի N 232 որոշման

# ՑԱՆԿ
## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Գումարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1. | Սրբուհի Վարդանյան | 30000 |
| 2. | Շուշանիկ Աբրահամյան | 30000 |
| 3. | Անուշ Խանումյան | 30000 |
| 4. | Ծովինար Սիրունյան | 30000 |
| 5. | Ատոմ Փիլոսյան | 30000 |

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 p. ՆՈՐ ՀԱՃՆ, ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 233

## ԷՐԻԿ ԱԼԻԿԻ ԱՊՐԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՐԻԿ ԱԼԻԿԻ ԱՊՐԵՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածների, Ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Հարավարևելյան թաղամասի 13-րդ փողոցի 12 տան բնակչուհի՝ Սեդա Սարգսի Պողոսյանի դիմումը իր անչափահաս թոռների՝ Էրիկ Ալիկի Ապրեսյանի և Գարիկ Ալիկի Ապրեսյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու և իրեն խնամակալ նշանակելու մասին, հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2 նիստի արձանագրությունը և երեխաների լավագույն շահերը՝ ***որոշում եմ.***

1. Անչափահասներ Էրիկ Ալիկի Ապրեսյանի /ծնված 05.08.2006թ./ նկատմամբ սահմանել հոգաբարձություն, իսկ Գարիկ Ալիկի Ապրեսյանի /ծնված 02.04.2009թ./ նկատմամբ՝ խնամակալություն և խնամակալ նշանակել տատիկին՝ Սեդա Սարգսի Պողոսյանին /ծնված 25.09.1957թ./:
2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն Սեդա Սարգսի Պողոսյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սեդա Սարգսի Պողոսյանին որրոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

18 նոյեմբերի 2020 թվական
ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 p. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2020 թվականի N 234

## ԳՈՀԱՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի 6-րդ շենքի 28-րդ բնակարանի բնակչուհի Գոհար Վոլոդյայի Սիմոնյանի դիմումը՝ իր անչափահաս երեխաներին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զորավար Անդրանիկի փողոցի 6-րդ շենքի 28-րդ բնակարանի՝ երեխաների բաժնեմասը օտարելու թույլտվություն տալու մասին և խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2 նիստի արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Թույլատրել Գոհար Վոլոդյայի Սիմոնյանին, /ծնված 10.02.1977թ./, որպես անչափահասներ՝ Դանիել Արթուրի Քալաշյանի /ծնված 25.02.2005թ./, Ագապե Արթուրի Քալաշյանի /ծնված 30.12.2007թ./ և Հովսեփ Արթուրի Քալաշյանի /ծնված 03.06.2010թ./ օրինական ներկայացուցիչ, օտարելու Նոր Հաճն համայնքի Զորավար Անդրանիկի փողոցի 6-րդ շենքի 28-րդ բնակարանի՝ համասեփականության իրավունքով նրանց պատկանող բաժնեմասը /կադ.ծածկագիր՝ 07-006-0007-0003-001-028/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գոհար Վոլոդյայի Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

18 նոյեմբերի 2020 թվական
Ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20-ը նոյեմբերի 2020թ. N 235

## ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԳԵՎԱՇԵՆ ԹԱՂԱՄԱՍԻ, 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՔԱՐԵ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած քարե պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի հունիսի 04-ի N 04062020-07-0083 վկայական) Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն թաղամասի, 2-րդ փողոցի, թիվ 7 հասցեում գտնվող 07-006-0041-0039 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.4 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես բնակելի կառուցապատման հողամաս:
2. Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն թաղամասի, 2-րդ փողոցի, թիվ 7 հասցեում գտնվող՝ 4000 քառակուսի մետր, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 23.36 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական (հատակագծերը կցվում են):
3. Սուրեն Էլիբեկի Հովհաննիսյանը պարտավոր է ինքնակամ կառուցված 23.36 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 49056 (քառասունինը հազար հիսունվեց) դրամ հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Ուժը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից հաստատված 2020 թվականի հունիսի 15-ի թիվ 9 շինարարության թույլտվությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **Գ.Մաթևոսյան**